Արձանագրություն N 3

**«Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի 2021 թվականի կարիքների համար անհրաժեշտ տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով «ՀԱՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/23» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի**

ք. Երևան

«17» «մարտի» 2021թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | Արտակ Պետրոսյան |
| Հանձնաժողովի անդամներ | Ռուբեն Իսրաելյան, Գայանե Գևորգյան |
| Հանձնաժողովի քարտուղար | Միհրան Համբարձումյան |

***1. Չափաբաժնի գնահատման կասեցման մասին***

---

***(Ա. Պետրոսյան)***

Քանի որ, սույն գնման ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով առաջարկված նվազագույն գինը՝ առանց ԱԱՀ, ԱԱՀ-ն ավելացնելուց հետո գերազանցում է գնման առարկայի համար նախատեսված առավելագույն գինը, իսկ 2-րդ նվազագույն գին առաջարկած մասնակցը ԱԱՀ վճարող չէ, որոշվեց նշված չափաբաժնի գնահատման համար դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ մեթոդական աջակցություն ստանալու նպատակով:

Հաշվի առնելով վերոգրյալը «ՀԱՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/23» ծածկագրով գնման ընթացակարգի 6-րդ չափաբաժնի գնահատումը կասեցվում է մինչև ՀՀ ֆինանսների նախարարությունից մեթոդական աջակցություն ստանալը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

***2. Ընտրված մասնակիցների մասին***

---

***(Ա. Պետրոսյան)***

«ՀԱՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/23» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակիցներ են ճանաչվել.

Ռեաքիմ ՍՊԸ – 5-րդ չափաբաժնի մասով,

ՍԱԴ ՍՊԸ – 4-րդ չափաբաժնի մասով,

Դանինի ՍՊԸ-ի Հայաստանյան մ/ճ – 1-ին և 7-րդ չափաբաժինների մասով:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի գ. պարբերությունը, որոշվեց ստորև նշված մասնակիցների հետ կնքել պայմանագրեր, պայմանով որ վերջիններս ուժի մեջ կմտնեն համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում.

Մեծ Ծիածան ՍՊԸ – 3 և 8-րդ չափաբաժինների մասով,

Դանինի ՍՊԸ-ի Հայաստանյան մ/ճ – 2-րդ չափաբաժնի մասով:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### *3. Անգործության ժամկետի մասին*

---

*(Ա. Պետրոսյան)*

«ՀԱՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/23» ծածկագրով գնման ընթացակարգի անգործության ժամկետ է սահմանվում 5 օրացուցային օր (մինչև 23.03.2021թ. ներառյալ):

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### *4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին*

---

*(Ա. Պետրոսյան)*

«ՀԱՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/23» ծածկագրով գնման ընթացակարգի 6-րդ չափաբաժնի գնահատման նիստը տեղի կունենա ՀՀ ֆինանսների նախարարությունից մեթոդական աջակցություն ստանալուց հետո:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | ________ | Արտակ Պետրոսյան |
| Հանձնաժողովի անդամներ | ________ | Ռուբեն Իսրաելյան |
| | ________ | Գայանե Գևորգյան |
| Հանձնաժողովի քարտուղար | ________ | Միհրան Համբարձումյան |